Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-692-30.10.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» պարբերությունում «Պետական պահպանության ծառայությունում զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների որակավորման համար՝ պաշտոնային դրույքաչափին դրամական բացարձակ մեծությամբ սահմանվող ավելացում» բառերից հետո լրացնել «կամ Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կատարողականի գնահատման հիման վրա՝ պաշտոնային դրույքաչափին դրամական բացարձակ մեծությամբ սահմանվող ավելացում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում «եւ փրկարար ծառայության ծառայողների» բառերից հետո լրացնել «, Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց» բառերը:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.3-րդ մաս.

«6.3. Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելավճար կատարողականի գնահատման հիման վրա: Կատարողականի գնահատման չափանիշները եւ դրա հիման վրա յուրաքանչյուր պաշտոնի հավելավճարի առավելագույն չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հավելավճարի տրամադրման, հաշվարկման կարգն ու մեթոդաբանությունը՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահը:»,

2) 7-րդ մասում «6.1-ին մասով» բառերը փոխարինել «6.1-ին եւ 6.3-րդ մասերով» բառերով:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Մինչեւ կատարողականի գնահատման հիման վրա հավելավճարի տրամադրման նոր համակարգին անցումը Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրությունն իրականացվում է մինչեւ սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասն ուժի մեջ մտնելը գործող կարգով:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասում նշված՝ կատարողականի գնահատման չափանիշները եւ դրա հիման վրա յուրաքանչյուր պաշտոնի հավելավճարի առավելագույն չափը սահմանող ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

4. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասում նշված՝ հավելավճարի տրամադրման, հաշվարկման կարգն ու մեթոդաբանությունը սահմանող իրավական ակտն ընդունվում է սույն հոդվածի 3-րդ մասում նշված ենթաօրենսդրական իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» պարբերությունում «Պետական պահպանության ծառայությունում զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների որակավորման համար՝ պաշտոնային դրույքաչափին դրամական բացարձակ մեծությամբ սահմանվող ավելացում» բառերից հետո լրացնել «կամ Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց~~Պետական եկամուտների կոմիտեի ծառայողների~~ կատարողականի գնահատման հիման վրա՝ պաշտոնային դրույքաչափին դրամական բացարձակ մեծությամբ սահմանվող ավելացում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում «եւ փրկարար ծառայության ծառայողների» բառերից~~ից~~ հետո ~~փոխարինել~~ լրացնել «, Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց~~փրկարար ծառայության եւ Պետական եկամուտների կոմիտեի~~» ~~բառերով~~բառերը:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.3-րդ մաս.

«6.3. Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց~~Պետական եկամուտների կոմիտեի ծառայողներին~~ տրվում է հավելավճար կատարողականի գնահատման հիման վրա:

Կատարողականի գնահատման չափանիշները եւ դրա հիման վրա յուրաքանչյուր պաշտոնի հավելավճարի առավելագույն չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~։~~.

~~Սույն մասով սահմանված~~իսկ հավելավճարի տրամադրման, հաշվարկման կարգն ու մեթոդաբանությունը~~՝ սահմանում է~~ Պետական եկամուտների կոմիտեի նախագահը:»,

2) 7-րդ մասում «6.1-ին մասով» բառերը փոխարինել «6.1-ին եւ 6.3-րդ մասերով» բառերով:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից~~2024 թվականի հունվարի 1-ից~~:

2. Մինչեւ կատարողականի գնահատման հիման վրա հավելավճարի տրամադրման նոր համակարգին անցումը Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց~~Պետական եկամուտների կոմիտեի ծառայողների~~ վարձատրությունն իրականացվում է մինչեւ սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասն ուժի մեջ մտնելը գործող կարգով:

3. Սույն օրենքի~~ց~~ 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասում նշված՝ կատարողականի գնահատման չափանիշները եւ դրա հիման վրա յուրաքանչյուր պաշտոնի հավելավճարի առավելագույն չափը սահմանող~~բխող~~ ենթաօրենսդրական իրավական ~~ակտերն~~ ակտն ընդունվում ~~են~~ է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

4. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասում նշված՝ հավելավճարի տրամադրման, հաշվարկման կարգն ու մեթոդաբանությունը սահմանող իրավական ակտն ընդունվում է սույն հոդվածի 3-րդ մասում նշված ենթաօրենսդրական իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-692-30.10.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծով նախատեսվում է Պետական եկամուտների կոմիտեի ծառայողներին կատարողականի գնահատման հիման վրա տալ հավելավճար: Նշվածի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ Օրենքի գործողությունը տարածվում է, ի թիվս այլոց, պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ տարանջատում է պետական ծառայության տեսակները, որոնց շարքում «պետական եկամուտների կոմիտեի ծառայող» կամ նման ծառայության առանձին տեսակ սահմանված չէ: Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «Պետական եկամուտների կոմիտեի ծառայողների» բառերը	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			փոխարինել «Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Սույն ամփոփաթերթի 1-ին կետում ներկայացված առաջարկության հիմքով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում «եւ փրկարար ծառայության ծառայողների» բառերից հետո լրացնել «, Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց» բառերը:»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 7-րդ հոդվածում լրացվող նոր 6.3-րդ մասով նախատեսված դրույթի շարադրանքն առավել հստակեցնելու նպատակով առաջարկում ենք նշված մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6.3. Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելավճար կատարողականի գնահատման հիման վրա: Կատարողականի գնահատման չափանիշները եւ դրա հիման վրա յուրաքանչյուր պաշտոնի հավելավճարի առավելագույն չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հավելավճարի տրամադրման, հաշվարկման կարգն ու մեթոդաբանությունը՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահը:»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագիծն ընդգրկվել է ՀՀ Ազգային ժողովի 2024 թվականի հունվարի 15-ին գումարվող նիստերի օրակարգում և ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան	**Ընդունվել է:**

			ընթերցմամբ ընդունվել է 2024թ. հունվարի 16-ին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթը խմբագրել՝ Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «2024 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:	փոփոխություն:	
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մաս	Սույն ամփոփաթերթի 1-ին կետում ներկայացված առաջարկության հիմքով առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «Պետական եկամուտների կոմիտեի ծառայողների» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասով նախատեսվում է, որ կատարողականի գնահատման չափանիշները եւ դրա հիման վրա յուրաքանչյուր պաշտոնի հավելավճարի առավելագույն չափը սահմանվում են ՀՀ կառավարության, իսկ հավելավճարի տրամադրման, հաշվարկման կարգն ու մեթոդաբանությունը՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից: Հաշվի առնելով, որ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից ընդունվող իրավական ակտով կարգավորման ենթակա իրավահարաբերությունները բխում են ՀՀ կառավարության կողմից ընդունվող ենթաօրենսդրական իրավական ակտով կարգավորման ենթակա իրավահարաբերություններից, ուստի առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

			«3. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասում նշված՝ կատարողականի գնահատման չափանիշները եւ դրա հիման վրա յուրաքանչյուր պաշտոնի հավելավճարի առավելագույն չափը սահմանող ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:»: Միաժամանակ, առաջարկում ենք նույն հոդվածում լրացնել 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «4. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.3-րդ մասում նշված՝ հավելավճարի տրամադրման, հաշվարկման կարգն ու մեթոդաբանությունը սահմանող իրավական ակտն ընդունվում է սույն հոդվածի 3-րդ մասում նշված ենթաօրենսդրական իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:»:		